




## Դ. ԿԻՐԱԿԻ ԽԱՉԷՆ ԵՏՔ



### ԺԱՄԱՄՈՒՏ

Միածին Որդի եւ Աստուծոյ Խօսք, եւ անմահ՝ Եութիւն, որ յանձն առիր մարմնանալ սուրբ եւ միշտ կոյս Աստուածածինէն, անփոփոխելի՛ղ՝ մարդ դառնալով խաչուեցար, Քրիստո՛ս Աստուած եւ մահովո՛ր՝ մահը խորտակեցիր. մին անձերէն՝ Ամենասուրբ Երրորդութեան, արժանի փառքի՝ Հօր եւ Հոգւոյն հետ փրկէ՛ մեզ:

### ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ ԴՁ

Աստուած թագաւորեց հեթանոսներու վրայ եւ լուսազարդելով պայծառացուց սուրբ Եկեղեցին: Ժողովուրդներ՝ Քրիստոսը բարեբանեցէք:

Տերը զօրութիւն հագաւ, քանի որ մահուան խայթոցը ջնջեց իր սուրբ Խաչով: Ժողովուրդներ, Զրիստոսը բարեբանեցէք:

Յարութիւն առաւ Աստուած եւ ամբողջ տիեզերքը նորոգուեցաւ: Մանուկները հաղորդուեցան կենարարին մարմնին եւ արեան: Ժողովուրդներ, Զրիստոսը բարեբանեցէք:

**ՄԵՍԵՂԻ (Սաղմոս 64, 2 եւ 3)**


Աստուած իմ, Սիոնի վրայ կատարուած փառաբանութիւնը միայն քեզի կը վայելէ եւ Երուսաղէմի մէջ քեզի աղօթքներ թող բարձրանան:

**ԸՆԹԵՐՅՈՒԱԾ  
ՍՈՒՐԲ ՊՕՂՈՍԻ ՎԱԿՆ ՈՒ ՄՏԱՅՈՒԹԻՒՆԸ**

**Պօղոս առաքեալին կորնթացիներուն ուղղած երկրորդ թուղթէն  
(2 Կոր 13, 5-13)**

Ընկեցէ՛ք դուք ձեզ եւ տեսէք եթէ հաւատքի մէջ էք: Փորձեցէ՛ք դուք ձեզ: Չե՞ք գիտեր որ Զրիստոս կը բնակի ձեր մէջ: Միայն թէ անկարող ըլլաք այդ փորձը ընելու: Բայց յոյս ունիմ, թէ պիտի իմանաք որ մենք արդէն փորձուած ենք եւ ապիկար չենք: Կ'աղօթենք Աստուծոյ, որ չարը ձեզի չվնասէ, ոչ որպէսզի մենք աւելի ընտիր երեւինք, այլ, որպէսզի դուք բարին գործէք ու մենք յայտնուինք որպէս անկարող: Որովհետեւ ճշմարտութեան հակառակիլ չենք կրնար, քանի որ վերակացու ենք ճշմարտութեան: Ուրախ ենք, երբ մենք տկար ենք եւ դուք՝ զօրաւոր: Մեր աղօթքին մէջ կը խնդրենք, որ դուք հաստատ մնաք:

Կը գրեմ ձեզի այս բաները, մինչ բացակայ եմ, որպէսզի երբ ձեզի գամ՝ առիթ չունենամ կիրարկելու խստութիւնը այն իշխանութեամբ, զոր Տերը տուաւ ինծի, շինելու եւ ոչ թէ քանդելու համար: Այսուհետեւ, եղբայրներ, ողջ եղէ՛ք, հաստատ մնացէ՛ք, միտարարուեցէ՛ք, աշխատեցէ՛ք ձեր կատարելութեան, միաբան եղէ՛ք, խաղաղութեամբ ապրեցէ՛ք եւ Աստուած սիրոյ եւ խաղաղութեան՝ ձեզի հետ պիտի ըլլայ: Ողջուեցէ՛ք զիրար սուրբ համբոյրներով: Բոլոր սուրբերը ձեզ կ'ողջունեն: Մեր Տիրոջ Յիսուս Զրիստոսի շնորհքը, Աստուծոյ սերը, Սուրբ Հոգիին հաղորդութիւնը բոլորիդ հետ ըլլան. Ամէն:



**Ալելուիա, Ալելուիա,**

Տէ՛ր, քու երկրիդ հանդէպ դուն սեր ցոյց տուիր եւ Յակոբի ազգը գերութենէ վերադարձուցիր:

(Սաղմոս 84, 2)

**Ալելուիա:**

## ԱՒԵՏԱՐԱՆ ՅԻՍՈՒՄԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

(Մարկ 11, 27-33)

Սեր Տէր Յիսուսի Զրիստոսի հետ, աշակերտները Երուսաղէմ վերադարձան: Մինչ Յիսուս Տաճարին մէջ կը շրջագայէր՝ քահանայապետները, դպիրներն ու ծերերը մօտեցան եւ հարցուցին. «Ի՞նչ իշխանութեամբ կ'ընես ասիկա եւ ո՞վ տուաւ քեզի այդ իշխանութիւնը»: Յիսուս ըսաւ. «Ես ալ ձեզի հարցում մը պիտի ընեմ, պատասխանեցէ՛ք ինծի, եւ ես ձեզի պիտի ըսեմ, թէ ի՞նչ իշխանութեամբ կ'ընեմ ասիկա: Յովհաննէսի մկրտութիւնը երկինքէ՛ն

էր, թէ մարդոցմէ, պատասխանեցէ՛ք ինծի»: Անոնք իրարու հետ կը խորհրդակցէին ու կ'ըսէին. «Եթէ պատասխանեց երկինքէն, պիտի ըսէ մեզի՝ ինչո՞ւ չհաւատացիք անոր. իսկ եթէ ըսենք մարդոցմէ էր, կը վախճանք ժողովուրդէն, որովհետեւ ամենքը գիտէին որ Յովհաննէս մարգարտ մըն է»: Այն ատեն անոնք պատասխանեցին Յիսուսի. «Չենք գիտեր»: Եւ Յիսուս ըսաւ անոնց. «Ես ալ ձեզի չեմ ըսեր թէ ի՞նչ իշխանութեամբ կ'ընեմ ասիկա»:



**Ի՞նչ իշխանութեամբ կ'ընես ասիկա»**

Յրեաներու մեծամեծներուն Յիսուսին ուղղած այս հարցումը երկու նպատակ կը հետապնդէր, սակայն նախքան գիտնալը հրեաներուն նպատակը, անհրաժեշտ է գիտնալ իշխանութեան իմաստը Ս. Գիրքին մէջ:


Իշխանութիւնը լիազօրութիւնն է, որ կը տրուի հզօրագոյն անձին, ուստի Զրիստոսի տրուած իշխանութիւնը Յօր Աստուծմէ տրուած լիազօրութիւնն է, ինչպէս որ ինք յաճախ կ'ըսէ:

Յրեաները իշխանութեան մասին հարցուցին նախանձէ մղուած, ինչպէս կը յայտնուի սոյն հատուածին նախորդող հատուածներուն մէջ, ուր Մարկոս ակտարանիչ մեզի ցոյց կու տայ թէ ինչպէս Յիսուս Երուսաղէմ կը մտնէ որպէս թագաւոր, եւ ինչպէս տաճարին մէջ գտնուող վաճառականները դուրս կը հանէ՝ որպէս քահանայապետ:

Յետեւաբար, իշխանութեան մասին հարցումը ուղղեցին Յիսուսին, որովհետեւ Ան իրենց ծրագիրները կը խոչընդոտէր, եւ որպէսզի պատեհութիւնը ունենային զինք մատնելու իր իսկ տուած պատասխանին պատճառով, գիտնալով հանդերձ Յիսուսին Աստուծոյ կողմէ դրկուած ըլլալը, այնուամենայնիւ ուզեցին զինք փորձելով մատնել:

Յիսուսին տուած հարցումը, պատասխանէն խուսափելու համար չէ, որովհետեւ Ան քանիցս յայտարարած էր, թէ այս գործերը իրմէ չեն, այլ զինք դրկողէն, եւ ինք Յօր կամքն է որ կը կատարէ: Սակայն Յիսուս այս հարցումը ուղղեց պարզապէս հրեաներուն յիշեցնելու համար որ քարսիրտ եւ անգութ են եւ միաժամանակ հասկցնելու որ Յովհաննէսին առաքելութիւնը Մեսիային ճամբան հարթելն էր:

Այսօր, 21-րդ դարուն, երբ մարդս



Զրիստոսի օգնութեան կարիքը ունենայ, ապա իրեն կը շնորհէ իշխանութիւնը, իսկ երբ ամէն բան կարգին է եւ հեզասահ կ'ընթանայ, այդ պահուն կը մոռնայ Զրիստոսը եւ կը նմանի հրեաներուն, որոնք միայն հարցում կ'ուղղէին Զրիստոսի, զինք մեղադրելով մատնելու միտումով:

Ուստի յաւիտենական փառքին արժանանալու համար՝ պարտինք միշտ գոհութիւն եւ փառաբանութիւն մատուցանել Տիրոջ, որովհետեւ իրեն կը վայելէ փառքը, իշխանութիւնը եւ պատիւը: Ամէն: